



Լ. ԱՋՆԱՒՈՒՐԵԱՆ - Իրանկար (nature morte)

նկարիչ մըն է անիկա անտարակոյս, եւ տիրացած է վրձինի գաղտնիքներուն:

Մարիոյ Լեփորէ՝ իտալացի գեղագէտ քննադատը կ'ըսէ թէ Աճնաւորեանի նրկարչութիւնը «անկեղծ արտայայտութիւնն է խղճամիտ արուեստագէտի մը, որ գիտէ իր արուեստը եւ ունի գնահատելի յատկութիւններ: Ան կը ջանայ իր ճամբայէն քալել առանց նորոյթներ դիտելու, առանց ինքզինքը քողարկելու. այլ կը վստահի գլխաւորապէս իր բնագոյնի եւ աշխատանքին, միշտ աւելի յառաջդիմելու համար»:

Յառաջագէտ երկիրներու մէջ, ամէն տարի՝ սունկերու նման, նորանոր նկարիչներ կը բուսնին: Տարուան գրեթէ բոլոր եղանակներուն՝ ցուցահանդէսի սը-

րահներու դուռերը միշտ բաց են: Վերացական, գերիրապաշտ արուեստի դիմա-կին ներքեւ, անտաղանդ միջակութիւններ հրապարակը կ'աղմկեն եւ շատ անգամ նոյնքան անտաղանդ քննադատներու քաջալերին եւ գնահատանքին կ'արժանանան: Անշուշտ, ժամանակը՝ անկաշառ եւ արգարակորով քննադատը, դաւկաճար տերեւներու նման պիտի աւել տանի մեր օրերու արտագրութիւններուն մեծամասնութիւնը: Վստահ ենք սակայն, որ Լեւոն Աճնաւորեան, իբրեւ տաղանդաւոր նկարիչ, նուրբ ճաշակի տէր եւ ջինջ գոյներու վարպետ, հայ բնորեալ նկարիչներու աստղահոյսին մէջ պիտի փայլի երկար:

Հ. Ե. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ՄԵՌԱՆ ԸՆԿԵՐՈՋ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ամէնէն առաջ Գերմանիա գնաց
յետոյ աւելի մօտ Իտալիա
անկէ՝ աւելի մօտ Յունաստան
ու անկէ ետք
ս'ըր. ոչ ոք չիտէ:

Անիկա
ամէն անգամ որ ինձ հանդիպէր,
ճամբորդութիւններուն վրայ կը խօսէր
երբեմն ժամեր
երբեմն քանի մը վայրկեան՝
երբեմն ամիսներ.
բայց ինչ որ ալ ըլլար
շատ հետաքրքրական էր՝
շատ:

Անոր աչքերը
փայլ մը ունէին, որ իմիններս չունին.
եւ անիկա ինձ շատ բաներ կը պատմէր,
բայց ես չեմ կրնար
դանոնք հոս դրել:

Ուրիշ անգամ մը անիկա գնաց
Պարսկաստան, յետոյ Հնդկաստան
յետոյ Չինաստան.
երբ վերադարձաւ
շատ բաներ պատմեց ինձ.
եւ մտիկ կ'ընէր
ու ինքը կը խօսէր,
խօսած ատենը դիտէի թէ ինչ որ կ'ըսէր
ճիշտ էր.
արդէն անիկա երբեք
սուտ խօսած չէր:

Բայց եկաւ ատեն մը
ու ան չկարողացաւ ճամբորդել:
Պատճառները պարզ էին.
ընտանեկան խնդիրներ, դրամական խնդիրներ,
առողջական խնդիրներ, պարապ խնդիր-
ու ինձ ըսաւ թէ որ [ներ-
քիչ մ'ատեն ալ եթէ չկարենամ
ճամբորդել,
պիտի խենդենամ:
Ու անոր աչքերը փայլ մը ունէին.
ու իմ աչքերս չունէին այդ փայլը:

Ատեն մը վերջ տեսայ զինքը.
ուրախ էր.
ինձ ըսաւ թէ մօտ ատենէն
պիտի երթար
նախ Լիբիա, յետոյ Փափլակոնիա
յետոյ Քաննոնիա:
Նստայ քովը, երկար ատեն.
խօսեցայ շատ բաներ.
լաւ պիտի ըլլար թէ քովս
մնար,
բայց ան մեկնեցաւ.
կար դարձեալ աչքերուն մէջ փայլ մը
եւ ուրախ էր,
բայց ես վշտացած եմ իրեն հանդէպ
քանի որ չըսաւ թէ
ինչ ճամբով պիտի երթար:

ԱՌԱՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ